

Ժ. դարուն ունէր երկու եկեղեցի: Խաչակիրներու բոլոր պատմիչները այս քաղաքը կը կոչեն Ռամուլա, Ռամ և Ռամաթա: Երբ Խաչակիրները գրաւեցին քաղաքը անմիջապէս հաստատեցին հոն եպիսկոպոսութիւն մը յանուն Լիւդի Ս. Գէորգին: 1160–1282 թուեկիւր ուխտաւորները այս քաղաքը կը նկատեն Աւետարանին Արիմաթիան՝ Յովսէփի հայրենիքը:

Յոպպէի ճանապարհին վրայ, քաղաքին ծայրը կը գտնուի եկեցեցի մը յանուն Ս. Յովսէփ Արիմաթացիի եւ Ս. Նիկողիմոսի, որ օգնեց մեր Փրկչի թաղման: Քաղաքին արեւելքը բարձրացած է Ճամիա էլ Ապիաթը իր նշանաւոր աշտարակով. քրիստոնեաները այս աշտարակը կը կոչեն «աշտարակ ֆառաւուն վիպից»: Արձանագրութենէն կը հասկցուի թէ այս յիշատակարանը շինուած է 1267–1268, և ուրիշ մըն ալ դրան վրայ գրուած՝ կը հաստատէ թէ, 1318 ին աւարտած է Սուլթան Նասըր Մուհամմէտ իպն Քալաունի օրով: Այս աշտարակը կը գործածուի պատերազմի ժամանակ իբր գիտարան:

Ռէմլէի երկու եկեղեցիներն են Ս. Յովհաննէս Մկրտիչ և Քառասուն Վկայից՝ երկուքն ալ մզկիթի վերածուած: 1613 ին ուղեգիր ուխտաւոր մը կը նկարագրէ «երկու գեղեցիկ եկեղեցիներ խիստ ամբողջական, բայց մզկիթի վերածուած են, մին դուրսը եւ միւսը քաղաքին մէջ. մին նուիրուած էր Ս. Յովհաննէս Մկրտիչի, միւսը՝ Քառասուն Վկաներու, որոնց մասունքը Հայաստանի Սեբաստիայէն փոխադրուելով՝ ծանօթ է թէ ստուգիւ զետեղուած են այս եկեղեցիին սեղանին ներքեւ» (Հ. Վ. Ե. էջ 324):

Ռէմլէի մէջ հայերը ունին վանք մը Ս. Գէորգ անունով, ուխտաւորներու յատուկ սենեակներով եւ